

ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՐԱՒ - ԱՓՐԻԿԱՅՈՒՄ

(Անցքերը նույնների սկզբներից մինչև շեկոտեմբ. վերջը)

Անգլիական պաշարման դրութիւն չափաբարեց կոլտբէրգի, Սոքէնս-բէրգի, Ալբէրգի, Ալիւալ—Նորտի, Ուէյհաուզի, Գլէնգրէյի, Տակ Բաինս-տաունի, Կադկարտի շրջաններում. նաև չափաբարութիւն եղաւ, որպէս զի ոչ մի ուշադրութիւն չդարձնելի Օրանժեան հանրապետութեան չափա-բարութեան վրայ, որը Կապի մի քանի հոշերը ալի. հանրապետութեան հետ միացրած է չափաբարել:

Կոլտբէրգ քաղաքը 1.500 բուրեր գրաւեցին:

Լէյթսմիթի մօտ երկարատև կռիւ եղաւ, կորուստներով բուրերի կոշմից:

Օրանժեան բուրերը գրաւեցին Բէրկլի, Վէտտ-Գուզլաս և Գրիկլիտաուն և հաստատեցին աշտոյ իրենց վարչութիւնը:

6-ին նու. հեռագրական հաւորակցութիւնը Ջեմստաունի հետ կորեց:

Նու. 9-ին բոլոր բրիտանական հպարակները, բացի մի քանի կա-նանցից, թողին Լէյթ-Գրէյ և մեծ մասամբ զնացին բազուտների երկիրը: Խանութները ու ազարակները (==ֆերմաներ) Օրանժեան բուրերի ձեռ-քումն են: Ապաստւում էին որ բուրերը պիտի գան Հերշէլ, ուստից պարզա-մաւորութիւն զնաց բուրերի պետ Օլիւիէի մօտ, որը պարասխանեց թէ մօրալիւր չէ Հերշէլ մոտեցել, բայց մի ջոկատ կը շրկի Բարկլի-Խոտ՝ վարչու-թիւն հաստատելու համար:

Պաշարւած Կիմբերլէյ քաղաքից նու. 4-ին անգլիական խուզարկու մի ջոկատ առաջին փորձն արաւ դուրս գալու, բայց բուրերի հարածնե-րից սորիպեց ետ դառնալու մի քանի մարդ կորցնելով. Կիմբերլէյում սկզբից մինչև ալի օրը կորցրել են ընդամենը 9 հոգի: Նու. 5-ին փորձը կրկնեց, բայց անաջող. կապիտան Բոդլի վերջ ստացաւ:

Անգլիան նու. 11-ին հրաման տուց միլիցիայի 8 նոր վաշտ կազ-մակերպելու, որ 29-ին նու. պարտաստ լինեն ճամբաւ ընկնելու:

Միլնէր ի ընդհ. նահանգապետը Կապի երկրի և Նադալի 10 նու. տեղեկացրեց մինիստր Ջեմբերլէյին որ բուրերը աշխատում են բազուտ-ների պետեր իրնադանին և Ջոնլին իրենց կողմը գրաւելու. դոցանից առա-

ջինը հաւատարիմ է մնում, իսկ երկրորդը չարձակում կատարեց իրնդանի ելրօր վրայ և նորա մօր 3 մարդ սպանեց: Օրանժեան հանրապետութիւնը խոստացել է իրնդանին, որ բազուդներն երկիրը ընդմիջող իրենց կը պարկանի, եթէ նոքա ալժմից միաւնան բուրերի հետ. ալէ բանը չուզմունք է առաջացնում տեղացիների մէջ, բայց սոքա իրենց բաւարար են պահում:

Բելմոնտի մօր տեղի ունեցաւ կռիւ, ուր անգլիացիք բուրերին բռնած տեղից դուրս վանեցին:

Էստրօրտից անգլիական մի վաշտ փորձարաւ քաշաքից դուրս գալու:

Ջաչներ են պոտում թէ Կրիգէրը խաշալութիւն է առաջարկում. որանսվաւեան Ներկայացուցիչը Եւրոպայում՝ Լէյդս (որ նիւտ ունի Հաագում) հերքում է ալէ, աւելացնելով որ Կապչոտա խաշալութեան առաջարկով եկած Պրիգորուսկիչ, որ Տրանսվաալի նորագոյն Դադաւորն է, չի շրկած Կրիգէրից և գործում է իւր սեփական նախաձեռնութեամբ:

Անգ. գեներալ լորդ Մէյուէնը՝ նոյ. 11-ին չարձակում գործեց Բելմոնտի մօր ամուր Դիրք բռնող բուրերի վրայ, և ապա հեռագրեց պարերազմ. մինիստրին թէ չալթութիւն տարաւ, գերի վերցնելով 40 բուր, ձեռք գցելով շատ ձի և տաւար, և ոչնչացնելով պարերազմական շատ մթերք: Անգլիացիների կորուստն էր՝ 3 սպայ և 55 զինուոր սպանւած, 21 սպայ և 128 զինուոր վիրաւորւած, 18-ը անչալտ կորած. վիրաւորւածների մէջ էր բրիգադի զօրավարը. Բուրերը 3500 հոգի էին:

Կապի երկրի տեղական ցեղերի գլխաւորները վճիռ կալացրին, որով առաջարկում են թշնամու դէմ կռուելով ապացուցանել իրենց նւիրածութիւնը թագուհուն, ոչ մի անկարգութիւն չէրդել և խոստանում են շիտակ մնալ:

Մէֆկինգում, Թարմ Ջրի պակասութիւնից, տենդ է տարածւում. Բուրերը քանի գումար՝ այնքան աւելի են մօրեցնում քաշաքին իրենց պարտեհները. Մէֆկինգում զօրքը սորիւլած է գեղնալարկ տեղերում մնալ, որ առողջութեան վրայ վատ է ազդում:

Մօօզ գետի վրայ անգլ. գեն. Բարրոնը 2.000 հոգով կանգնած է մի քանի թնդանօթներով. Բուրերը, 1-ն նոյ. սկսեցին գրանատներ արձակել նոցա վրայ, բայց առանց մնաս տալու: Էստրօրտի մօր ևս կանգնած է գեն. Գիլէտարը 2.000 հոգով. երկուսն էլ շրջապարւած բուրերից և կորւած ալն լեռակիտից, ուր գեներալ Կլէրի ժողովում է նոր եկած զօրքերը:

Անգլիայում նոյ. 12-ից ամեն պատրաստութիւններ տեսնւած էին

Հարաւ-Աֆրիկա 6-րդ զօրաբաժին (Դիւիզիա) շրկելու համար, Ալգերշոտում արդէն հրաման էր ստացւած շարժի դնել հեծելազօր բրիգադի և արտիլերիայի մի զօրաբաժին:

Գեն. Ֆրէնչ Նաուպորտից խուզարկութիւն կատարեց Դէպի Եդլեսթերգ, բայց եր նահանջեց կորցնելով 3 մարդ:

աթալմտ լրագրի թղթակիցը Լորէնցո-Մարքեզէ քաշարում (պորտուգալական նաւահանգիստ հարաւ արեւելեան Աֆրիկայում, ուստից երկաթուղի է գնում Պրետորիա) խօսակցութիւն ունեցաւ քրանսփառական ծալրագոյն շատաւոր Գրիգորովսկու և Տրանսփառի ազգային խորհրդարանի անդամ Գեպերնիկի հետ. սոքա հիասթափութիւն լայրնեցին որ ոչ մի պետութիւն օգնութեան չեկաւ բուրերին, խոստովանեցին որ վերջի վերջոյ անգլիացիները թէ բուրերի բաջութիւնը կը գնահատուի, որպէս և ահա, որ բուրերը լաւ են վարում անգլիական գերիները հետ, ու վերջը համակիր եղան խաղաղութեան մասին բանակցելու համար:

Մինչեւ Կապի երկրի բնակիչներին չիմեց լալտարարութեամբ, թէ բուրերի կողմից արած կոչումները նպատակ ունէին համոզում զուսնելու, թէ բրիտանական կառավարութիւնը կամենում է հոլանդացիներին նշել և որ սոքա պիտի զրկեն սահմանադրական իրաւունքներից: Այլ լուրերը սուր են: Բրիտ. կառավարութիւնը կամենում է որ հոլանդացիք և անգլիացիք ամենաաւելի ազատութիւն և ինքնավարութիւն վաշելն և առաջւան պէս պահպանում է հաւասար ազատութիւն բոլոր հաւատարիմ հպատակ կոյոնիստների համար:

Բուրերը գրաւած են Բէլմոնտ, Կաֆիրստան և հարեան բլուրները: Ժուրէրը կորում է Էսթրորի անգլ. զօրքերին շէպի Պիտէրմարից-բորգ ետ գնալու ճանապարհը և նոցա վանեց շէպի Տուգելա գետը: Մեֆկինգի մօտ, 10-ի մօտերքը կադալի կալու եղաւ, առանց հետեանքի:

Նոյ. 9-ին Կապիտար են հասնում Անգլիայից շրկած 3.500 մարդ, բազմութիւն մթերքներով և 3.000 ջորիներով:

Աֆրիկանդները պարագլուխ Հոֆմանի շախմատութեամբ, Կապի հասարակաց աշխատանքների միեկտր Զաուէր ուղևորեց հիւսիս, Գրեյելու սր իւր ընտրողները Նոբոլում իրենց չեզօք պահեն, և բանակցի աշխտել գոնու Սրանմեան բուրերի պարագլուխ Հոֆմանի հետ ու քաղ անուի գինադարար առաջարկելու:

Լորդ Մէտուէնի զօրաբաժինը հասնում է Վիտուէպուսա:

Նոյ. 11-ին լորդ Մէտուէնը Բելտոնտի մօտ պարտութիւն է կրում:

Նոյ. սկիզբները Տրանսփառական մալրաշաք Պրետորիայում հաշւում էին 52 անգլիական սպայ և 1400 սորոլին զինւոր գերիներ:

1000 անգլիացի Ալբրէխտի հրամանատարութեամբ շուրս եկան Բուլուփալի վրա չարձակելու համար:

12 նոյ. կալու Էսթրորի մօտ, Վիլլա-Գրէնջի Ներքու, անգլիացիք (գեն. Գիլշեար) սորիպեցան նահաճջել, կորցնելով 3 սպանած, 44 վիրաւոր:

400 աֆրիկանդէրներ Կապի գաղութում, նոցա մէջ և Բարկլի-Խորի քաղաքագլուխը, միացան բուրերի հետ, որոնք գրաւեցին ալք քաղաքը.— (հեռագիր 13 նոյ.):

Լէդի-Վրէյ քաղաքը ընկաւ Օրանժեան բուրերի ձեռքը. բրիտանական հպատակները, բացի մի քանի կանանցից, հեռացան.

Կիմբերլէնց անգլիացիք անաջող փորձ են անում յուրս գալու (նոյ. 11 հեռ.):

Անգլիայում, պար. մինիստրը հրաման է տալիս որ մինչև 29 նոյ. շարժի շնուի ևս 8 բադալիոն միլիցիայի:

Գեներալ ժուրէր (բուրերի) մի նամակում, որ տպւեց Deutsche Zeitung թերթում, հաշիւ է անում, որ անգլիացիք ստիպւած լինելով բազմաթիւ զօրք բանեցնել Նատալում և Կապում, էտապալին կէտերում, կարող են պատերազմական զործողութիւնների համար միայն 35.000 մարդ ունենալ, որ շատ քիչ է 700 կիլոմէտր ունեցող պատերազմական գծի համար, մինչդեռ բուրերի էտապալին կէտերը իրենց հալերնի հողի վրայ են և կը պահանջեն միայն 500 հոգի. բուրերի էտապալին կէտերի միջև լաւ ճանապարհներ կան. և բուրերը այժմ ունին 50.000 զօրք. ի՞նչ բուրերին վիճակի պաշտպանողական շիրք ընդունել—ալք աւելի ևս նպաստաւոր կը լինի բուրերի համար և նոքա կը վարեն մի ալնպիսի պարտիզանական կռիւ, որին անգլիացիք չեն կարող մի քանի ամսից աւելի շրմանալ:

Բուրերը մօտենում են Սորոմբէրգին. (հեռ. 16 նոյ.):

Գեն. Բուլլէր հասնում է Պրեթմարիցբուրգ 14 (26) նոյ. և վերապանդնում է հեռագրաթիւը Էստրքորրի հետ:

Անգլիացիք շարժեցին Ղէպի Ֆրէր. երկաթուղային կամուրջները բուրերը քանդած էին:

Մեծ կռիւ Էնսլինի մօտ (ալքպէս է պաշտօնապէս կոչւում կռիւը Գրուսպաօի մօտ), ուր անգլիացիք կորցնում են 199 հոգի (ըստ հեռագրի 17 նոյ.):

Բուրերի զօրքերը կենդրոնացած են արևելեան Ղաշուում (գլխ. հրամանատարը գեն. ժուրէր), Լէդիսմիթի մօտ, Տուգէլա գետի վրայ և երրորդը՝ Պրեթմարիցբուրգ-Էստրքորրի գծից արևելք, որպէս զի անգլիացոց եր նահանջելու հնարաւորութիւնը կտրւի. արևմտեան Ղաշուում (գլխ. Կրոնիէ) նոյն կերպ գործում է Կիմբերլէի մօտ, Մոդդէր գետի վրայ և լորդ Մէրուէնի երկից:

Անգլիայում մինիստր Բալֆուր ճառ է արտասանում (17 նոյ.) ուր բողոքում է եւրոպական մամուլի աջ հաջեացքի շէմ, թէ իբր Անգլիան պատերազմ է վարում Տրանսվաալի ոսկու հանքերը ձեռք գցելու համար. նա ասաց որ ահա հարիւր տարի է ինչ Անգլիան իւր գաղութներում հարկեր չունի մալր երկրի օգտին:

Այս Մողէր-Բիւր գետի վրայ, ուր լորդ Մէտուէն ջախջախիչ պարտութիւն կրեց. 1800 հոգի սպանւած կամ վիրաւորւած, այսինքն 20% կռւի մէջ մասնակցող անգլիացիականներին: Մովսիսն բրիգադի բոլոր օֆիցէրները սպանւած, բացի երկուսից. մի քանի գաւառիական զնդեր կորցրին սպանների կէսից աւելին:

(Զեմբերլէն, Լէյպցիգում. 19 նոյ. ճառ է արտասանում, ուր այս միտքն է լայնում թէ Գերմանիայի «շահնակցութիւնը» անգլո-սաքսոնական երկու մեծ ճիւղերի՝ Անգլիայի և Հիւս. Ամերիկայի Միաց. Նահանգների հետ, ամենից մեծ գրաւականները կարող են լինել համաշխարհային խաղաղութեան: Նա դործ ածեց «շահնակցութիւն» խօսքը, թէև այդ կարող է լինել միայն քաղաքական անձերի մտքերի մէջ: Միաժամանակ լարձակողական էր ճառը Ֆրանսիայի նկատմամբ: Ճառը մեծ աշուղկ է գցում թէ Եւրոպա և թէ Ամերիկա, մեծ մասամբ լարձակողական դռնով Զեմբերլէնի դէմ: Ամերիկական շեսպանը Լոնդոնում ճառ խօսեց, ջերմագին ողջունելով Գերմանիայի, Անգլիայի և Ամերիկայի համերաշխ գործողութիւնը):

Անգլիայում չարժի է դնում 2-րդ կորպուսի մի զօրաբաժինն ևս:

Կիմբերլէի հետ հաղորդակցութեան համար Մոդէր գետի մօտ սարքւում է հելիոգրաֆ. (մօտ նոյմբ. 20):

Լէյպցիգի մօտ բուրերի թիւը հաշւում էին 10.000 մարդ, Լոլլէնգօի մօտ՝ 15.000, և ամուր գիրքերում 15 թնդանօթ:

Լէյպցիգի մօտ նոյեմբ. 18-ին բուրերը ռմբակոծեցին քաղաքը պաշարումից դէս ամենաւատիկ կերպով. այդ շարունակեց նաև 19-ին, իսկ կանոնաւոր կերպով 20-ին. քաղաքի շուրջը բուրերի դրած թնդանօթները հաշւում էին 32:

Անգլ. զինեակ Կիւրի գալիս է Ֆրէրի մօտ կանգնած բանակը և հրամանատարութիւնը իւր վրայ վերցնում:

Կիմբերլէի մօտ կախնույմբ., ուր անգլիացիք կորցրին 2 սպառ սպանւած և 4 վիրաւոր, սորբին զինուորներ սպանւած 20, վիրաւոր 28:

Բուրերը մոտում են Գորդըլիտ նոյեմբերի 20 (2 շեկոյ.):

Բուրերը լալթութիւններ տանելով հանդերձ՝ երբեք աչքաթող չեն ածում նաև այն դէպքը, երբ անգլիացիք կ'սկսեն լարձակողականը և բուրերը սորպւած կ'լինեն ետ դառնալ և իրենց հայրենիքի հողի վրայ կռուել. այդ միջոցով նոքա միշտ զբաղւած են նաև Պրեսբորիան ամրացնելով և մեծաքանակ մթերքներ պատրաստելով:

Անգլ. զինեակը Հադէկը իւր զօրքերը կենդրոնացնում է Մոլդէնո:

Տրանսիլալի կառավարութիւնը ինքն է ալժմ բանեցնում ոսկի հանքերը Յոնանէսբուրգում. նոյեմբերի 25-ի հաւաքով 12.000 ունցի էր ստացւած Ռոբինզոնի, Բոլնանցի, Ֆերէրիի հանքերում. դրամի պալատը ամանեկան ալժմ կորում է 100.000 ֆունտ սթերլինգ:

Արադովում ափրիկանդերի երկու ընկերությունները վճռեցին, որ իրենք, իբրև անգլոսպարակներ, չպիտի մասնակցեն պատերազմին, որին ճորձ չ'են համակրում. երկու շեղեգատ շրկեցին բուրերի հրամանատարին աչք մասին տեղեկացնելու:

Բուրերը հաւաքւում են Սպէտֆոնտէնի մօտ, բուրների վրայ և ամրանում:

Անգլիայում հրաման է տրւում (25 նոյ.) որ թագաւորական ձիաւոր արտիլերիայի երկու բաժանիչ անմիջապէս ուղևորեն Կապ:

Արմերելից անգլիացիք փորձում են չարձակել բուրերի վրայ (16 նոյեմբեր) արևմտեան կողմից, բայց անաջող. կորցնում են՝ Ակոտ-Տուրնէր հրամանատարին և 24 մարտ սպանւած, 26 վիրաւոր:

Լորդ Մէյուէն, որ վիրաւորւած էր, 23 նոյեմբեր նորից իւր վրայ է առնում հրամանատարութիւնը և գիշերները Արմերելի հետ հաշորդակցում է հելիոգրաֆի միջոցով, Իսկ Լէյֆամիթի հետ անգլիացիք հաշորդակցւում են ելքորական լուսի միջոցով:

Բուրերը միացնում են Տրանսվաալի հետ Գրեկուտանը՝ Գրեկուալանդ երկրում. հոլանդացիք, որոնք մինչ աչք ապստամբել էին անգլիացոց դէմ, ջերմութեամբ ընդունում են բուրերին:

Գեներալ Բուլլէր 23-ին նոյեմբեր իւր չորսով գնում է Ֆուէր:

Դորդրէխտը միացւում է Օրանժեան հանրապետութեան հետ:

Տուգելա գետի վրայ կամուրջը բուրերը բոլորովին կործանում են նոյեմբերի 25-ին:

Նադալից 3000 բուրեր նոյեմբ. 25 եկան դեն. Արոնիէի օգնութեան. Գրաստուենի մօտ բուրերը խորտակւում են բոլոր երկաթուղային շինութիւնները և կորում հեռագրաթիւր (նոյ. 27):

Լէյֆամիթում նոյ. 19-ից մինչև 27-ը սպանւած են 5 սպայ և 26 զինւոր, վիրաւոր՝ 15 սպայ և 130 զինւոր:

Կապի հոլանդացոց ապստամբութիւնը աճում է և չեզոքացնում դեն. Ֆրէնչի և Հարէկրի զօրաբաժինները:

Գեն. Հատէկը 4.000 (ըստ ալ աշխարհի 2.700) մարդով, երկու բաժնաբէտով դնաց Ստրոմբէրգի վրայ, ուր բուրերը բռնած էին չափ ամուր Դիրք. բուրերը սկսեցին կրակը աչք բողբոջել, երբ անգլիացիք կանգնած էին Դիրքի ստորոտը. կռիւը տևեց 3 ժամ. անդիպցիք մեծ պարտութիւն կրեցին: Աչք մասին Հարէկր հեռագրեց պատերազմ. մինխտրին. «Յաւում եմ, որ պիտի լարեմ ձեզ, որ աչք առաւօտ կադարած չարձակումը Ստրոմբէրգի վրայ մեծ կորուստներով ետ մղեց: Թշնամու Դիրքի մասին մենք սխալւեցանք առաջնորդներից. բացի աչք՝ տեղը անպէտք շուրս եկաւ»: (28 նոյ. = 10 դեկտ.). Հարէկրը կորցրել էր 8 սպայ վիրաւոր, 9-ը կորած, 2 սպանւած. ստորին զինւորներ՝ 17 վիրաւոր, 672-ը գերի ընկան:

Ամենից չափ փնտնեցան իրլանդեան գուճերը և նորոգումներ անցնեցան հրացանաձիգները:

Անգլիացոց այս պարտութիւնը ամենաազնեփալիներինցն էր պատիւ-րազմի սկզբից ի վեր:

Սորումբէրգից շէպ հիւսիս ամբողջ երկիրը ապստամբում է. ալդ փե-շի և բազուդոսները երկրի բնիկները կորցնում են հաւաքը շէպի անգ-լիացիք:

(Ամերիկացու, 30 ճու. սենատոր Մէսոն սենատում երկար ճառ է արտասանում համակրալից բուրերի համար):

Գեկորեմբերի 11-ին Լեյթսթիլից գեներալ Ուալտ Ղրկեց Մեթուէ-լիէրին 1.500 հոգով, որ գրաւի Սիւրպրիզոլ բլուրը և ոչնչացնի այնտեղ շրած գաութիցները. վերադարձին բուրերը ճամբան կորել էին և անգ-լիացիք պիտի ստիճանեռով անցնէին, կորցնելով սպանւած 1 սպայ, 10 զին-ւոր, վիրաւոր՝ 3 սպայ և 40 զինւոր. բուրերի կոյուստը իրր թէ աւելի մեծ է եղած:

Անգլ. գեներալ Բերոսթի բրիգադը շիրք է բռնում կոլէնզոի մօտ 3 մլոն հեռու:

Նոյեմբերի 30-ին կռիւ Մոդդեր գետի վրայ, որ փենց մինչև երեկոյ. ժամ 9¹/₂. շեկո. 1-ին կռիւը նորոգւեց. Անգլիացիք (գեներալ Մէթուէն) մեծ պարտութիւն կրեցին. կորուստը մեծ էր՝ սպանւած, վիրաւոր և կորած 817 հոգի. սպանւածները մէջ էր մալթր մարքիզ Վինչէստեր:

Բուրերի կորուստը անգլիացիք հաշուում են առնազն 800 հոգի:

Լորդ Մէթուէնի ալդ մեծ պարտութիւնը շրջում է անգլ. մինիստրին շարժի շնել 7-րդ զօրաբաժինը, ունենալով պահեստի մէջ 8-րդը. (Լորդ Կրոսս, Անգլիա, ճառ խօսեց, թէ, չնայած շտախտ շէպերին, անգլիա-կան ազատութեան գործը պիտի լալթանակի. Պատերազմից լիտով երբէք Տրանսիլաւիին չպիտի թող տրւի սպառնալ Անգլիային, ինչպէս նա արել է անցեալում):

Գլխաւոր հրամանատար Բուլլէրի մեծ պարտութիւնը. Հազիւ լորդ Մէթուէնի պարտութեան լուրն էր վրդովեցնում Անգլիային, լուր հասաւ ինքը Բուլլէրի պարտութեան մասին, որ եղաւ Տուզե-լա գետի մօտ, ուր Բուլլէրը կորցրեց 1.097 մարդ, շոցա մէջ 66 սպայ. սպանւած են 82, շոցա մէջ 6 սպայ. վիրաւոր 667, որոնց մէջ 42 սպայ, անյայտ կորած (գերի) 248, (3-ը սպայ). գե-րիները մէջ 15 սպայ:

Ալդ լուրերի վրայ անգլ. կառավարութիւնը, լայնելով թէ հանգա-մանքները այնպէս են, որ պահանջում է Բուլլէրի ներկայութիւնը և ամբողջ ուշադրութիւնը, վճռեց գլխաւոր հրամանատարը Հարա-Աֆրիկայում նշա-

ճակել ֆելդմարշալ Ռոբէրտսին և իբր շտաբի պետ՝ լորդ Կիչենը՝ ինչ (նա որ նորերս Սուդանը վերստին նւաճեց)։

Գեն. Հատէկը Պուրէսկրաալ՝ից իւր բանակը փոխադրում է Սոէրկրում, գեն. Ֆրէշը՝ Արուեդէլ։

Անգլիայից շրկում է 7-րդ զօրաբաժինը և արտիլլէրիան ուժեղացնելու համար դաուբիցի մի բարարէլ, և անուով են նաև ալ կարգադրութիւններ։

(Չէմբէրլէնը, այս պատերազմի գլխաւոր հեղինակը, շէկտ. 6-ին (18) Դուբլին հրաւիրւած լինելով՝ համալսարանից արանում է իրաւագիրութեան յոքորի պատաւոր կոչումը և ուսանողների գոչումներին պատասխանում է, թէ Ղրիմի և Հնդկաստանի ապստամբութեան ժամանակ Անգլիան աւելի մեծ չարիքներ տեսաւ, և համոզւած է որ ալժմ էլ ազգը, որպէս այն ժամանակ, որի կը կանգնի)։

Աւստրալիան վճռում է շէկտ. 29-ին նորից 1500 հեծեալներ զրկել Աֆրիկա, Անգլիայի օգնութեան։

Կիչենէր, շէկտ. 7-ին ղուրս է ելնում Օմշուրբանից՝ Կալիբէ և ապա Հարաւ- Աֆրիկա ուղևորելու համար։

Պ. Ետորիայից լուր հաղորդեց շէկտ. 6 (18)-ին թէ բուրերին միացան 900 կապլանդացիք Բարկոլի՝ում, 2000 Բարկոլի-իստ՝ում և 1.500—Բուրգերսդրպ՝ում։

Մինչև շէկտ. 6 (18) անգլիացոց կորուստը անգլիական լրագիրները հաշուում էին 7.630 մարդ՝ սպայ, ենթ-սպայ, սորորին զինւորներ՝ թէ վիրաւորւած, թէ դերի ընկած և թէ սպանւած։

(Մինիստր Գոչէնը 6 շէկտ. ներկալ եղաւ կամաւորներին պրեմիաներ բաժանելիս և չափոնեց, որ ցանկութիւններ են չափուում որ ծովափին զինւորները մասնակցեն Հար. Աֆրիկային պատերազմին. բաց, ասաց նա, մեր աչքերը պիտի ուղշած լինեն նաև ամբողջ աշխարհային շրջութեան ու մեզ շրջապատող ամեն կարելիութիւնների վրայ. առանց աշմուկ բարձրացնելու ցանկութիւնն ունենալու ես այնու ամենաչնիւ վճռում եմ պնդել որ մենք պէտք է ինչ էլ որ լինի մեծամեծ զոհաբերութիւններ անենք որպէսզի մեր ամեն մի նաւին վերա պահենք նորա մարդիկը լիակատարութեամբ)։

(Հնդկաստանի գլխաւոր հրամանատար Լոկկարտը պատերազմակ. միւնիստրի հարցին պատասխանեց թէ չորս գունդ և մի արտիլլէրիական բրիգատ պատրաստ են Հար. Աֆրիկա մեկնելու համար. Հնդկաստանում անգլ. զօրքը բաղկացած է 65-66.000 մարդուց և 20-30.000 կամաւորներին)։

(Կլամպէլ-Բաններման՝ը, լիբերալների պարագլուխը համալս.քննելի փորձի մէջ, Էրբերիւնում խօսած ճառի մէջ չափոնեց որ շրջութիւնը լուրջ

է, բայց կասկած չկայ որ լաջողութիւնը ապահոված է. նա պախարակեց գնէրալների վրայ կատարած քննադատական լարձակումները, նոքա արիարար կուում են թշնամու շէմ, և ասաց որ պատերազմը պիտի արիարար և հաւաստով շարունակել:

Անգլիայում, Լոնդոնի հարուստ Սիտի քաղաքամասի կորպորացիան ժողով է ունենում շեկտ. 9 (21)-ին, Լոնդոնի լորդ-մէրի նախագահութեամբ, ժողովում հաշորդում է թէ Սիտի'ն (Լոնդոնի հարուստ մասը) կազմակերպում է 1.000 կամաւորների զունդ. Հարաւ- Աֆրիկա շրկելու և հանգանակութեամբ շորա համար հաւաքած է 25.000 Փունտ (250 հազար ուսլի) և որ Ռոթշիլդը սորորագրեց 5 հազար Փունտ, լորդ գնէրալ-Ֆէլդմարշալ Ուոլսլէյը ընդունեց կորպորացիայի աւշ առաջարկը. շուքս Մալբորոն, պարլամէնտի անդամներ լորդ Վալիսսի, սըր Էլլենտ Լիս և վիպասան Կոնան Դոյլ կամաւոր զինուոր գրեցին. Հարաւ Աֆր. գնալու համար:

Կաշմիրի, Կիսորի և իռլանդի կառավարիչները առաջարկեցին անգլ. կառավարութեան ձիեր և զօրք. կառավարութիւնը վճռեց ամեն առաջարկովից ընդունել որոշ թուով ձիեր Հարաւ. Աֆրիկա շրկելու համար:

Գերմանական «Բունդեսռաթ» նաւը արեւելեան Աֆրիկայում բռնեց անգլիացիներից՝ խուզարկելու համար: Դէպքը, որ առաջին անգամը չէր պատահում, առիթ դուրս բանակցութիւնների Գերմանիայի և Անգլիայի միջև և ապա գերմ. մինիստր Բիւլովին՝ Անգլիայի շէմ ուղղած ճառը արտասանելու ռալստագում՝ ծովային իրաւունքի անորոշութեան և աւշ իրաւունքը աւելի որոշ կացուցանելու անհրաժեշտութեան մասին:

(Սխալ լուրեր են ստացում, թէ իբր գն. Ֆրենչ, չաշթութիւն տաւ. նելով, գրաւում է Կոնստանթն քաղաքը):

(Հնդկաստանի բոլոր տեղացի կառավարիչները առաջարկում են Անգլիային ձիեր՝ Հարաւ. Աֆրիկա շրկելու: Մաշրասի մահարաջան պատերազմական հիւանալի ձի ընծայեց լորդ Ռոբերտսին):

Գնդակեւ Պլէյդէր Բելմոնտի մօտ, Լոնտոնի կշտին փոքրիկ կուր միջ 40 հոգի գերի է վերցնում բուրերից. ապա գրաւեց Կուղլսոն՝ առանց ընդդիմութիւն գործելու:

Անգլ. կառավարութիւնը վճռեց (21 շեկտ.—3 լուն.) թագաւորութեան սահմաններից շորս 12 քաղալիոն միլիցիա կազմել կամաւորներից, արից 7-ը Հարաւ. Աֆրիկա շրկելու համար:

Կոնստանթն քաղաքը բուրերի ձեռքումն է. մօտակալ բլուրների վրայ շարունակ կռիւներ են տեղի ունենում:

(Թագուհու հրամանով շարմի է դնում 16 քաղալիոն միլիցիա, շեկտ. վերջերքը):

Գնդակեւ Պլէյդէր, չկարողանալով ամրանալ Կուղլսոնում—Անգլիա-

ին հաւատարիմ մնացած բնակիչներին հետ հեռանում է, յեկո. վերջերքը: Դեկտ. 23-ին Մեֆկինգից Դուրս գալու անաջող փորձ արին անգլիացիք, կորցնելով 21 սպանւած և 23 վիրաւոր:

25 յեկո. գնն. Կլէրի'ի զօրաբաժինը առանց հետեանքի լարձակումն արաւ բուրերի ձեռքում գորնուղ Կոլէնգոի վրայ:

Կոլէնգոյում յեկո. վերջը, Ժուլէրի ներկայութեամբ եղաւ բուրերի պարերազմական խորհուրդ՝ ապագայի գործողութիւնների ծրագիրը որոշելու համար:

(Մանչէստրում, մինիստր Բալֆուր յեկո. 27-ին ճառ խօսեց. ասաց որ, հնազած Տրանսվաալի հետ ունեցած յժաւրութիւններին, ոչ ոք, (?) և ի հարկէ նաև կառավարութիւնը, պարերազմը չէր համարում անխոստափելի և ոչ նոյն իսկ չափ հաւանական: Կառավարութիւնը չէր բողոքում Տրանսվաալի զինաւորումների դէմ, որովհետև Ջեմսոնի խուժելը Տրանսվաալ (1895-ին) կառավարութեան բերանը փակեց. Տրանսվաալը միշտ կարող էր պարտախանել թէ զինաւորում է ոչ Անգլիայի, այլ աւազակների դէմ. Անգլիան, աւշպիտով, պարերազմը սկսեց առանց պարտաստւած լինելու: Բալֆուրը խոստովանում է որ բուրերի պարերազմ. ընդունակութիւնները բաւականաչափ գնահատւած չէին, այլ և Լէյթիսմիթի կիրճերը ամենևին հաշի չէին առնւած. բայց, ասաց նա, բուրերի խուժումը անգլիական հողի վրայ աչնպէս չէ, որ վախեցնի նոյն իսկ ամենավախկոտներին: Բալֆուրը ասաց, որ, ընդհանուր առմամբ, գններալներին տրւած է գործելու ազատութիւն: Ճառախօսը ծալից արտասահմանեան գուշակութիւնները թէ իբր սկսւած է Բրիտանական կայսրութեան անկումը):

Տեղեկութիւններ Հարաւ-Աֆրիկայի ցեղերի մասին:

Տեղացիներից գլխաւոր ցեղերն են՝ Բուչմէնները, Հոթոտենտոտները և Կաֆրները:

Բուչմէն, երբ ստորին ցեղի են. նոցա բոլն է $1\frac{3}{4}$ արշին, կանաչք $1\frac{1}{2}$ արշին: Բնակւում էին Օրանժ և Վաալ գետերի ափերին, բայց հողանդացիք (բուրեր) նոցա ետ են մղել չափ յէպի հիւսիս: Եռանդուն են և յեմոկրատ, և չեն ընդունում սպիրտակների (եւրոպացիների) հասարակութեան մէջ: Իբրև ստորին ցեղ՝ նոքա նւազել են և երևի ջնջւելու են: Համարել գիտեն միայն մի քանի միաւորներ:

Հոտտենտոտները, տեղական անունով հօլ-հօլ, աւելի կարևոր են. բուրերը միջին եւրոպացու չափ է—2 արշին 8 վերջով *) ջրուր են և տոկուն: խաշնարածներ են, գիտեն և յարբնութիւն. թունաւոր ծալրուղներ են, բայց և քնքով ամուսիններ. գիտեն հաշիլ տասնեակները. քաջ են, կրօնը անորոշ է, և չունին տաճարներ և հոգևորականութիւն. մի քանի սնապաշ-

*) $1\frac{3}{4}$ արշինը=1 մետր, արշինը ունի 16 վերջով:

տութեան ձէսեր ունին որ կատարում են գերադասանքների աւագները։
Կոֆրները սեւերի մէջ ամենից մեծ ցեղն են հարաւ-Աֆրիկայում և
ամենից քաջն են. հպատակում են եւրոպացիներին. քրիստոնէութիւնը,
մանաւանդ բողոքական եկեղեցին, նոցա մէջ լայնորէն է գտել. մի ժա-
մանակ նոցա մի մասը մահմեդական էր։ Այդ նոցա մի ցեղն էր՝ զու-
լուսներ՝ որ սպանեցին պրինց Նապոլէօնին։ Ժամանակով ահալի էին պոր-
տուգալցիներին, ալ նաև անգլիացիք սփռաւ են զգուշութեամբ վարել
հեղինակը։ Բուրերին, որոնք նոցանից շատ հոշեր են խել, չեն սիրում։
Կաֆրները, ազգազրական տեսակէտով, բաժանում են թելուսն, բազուտոս
և մոտորեղի ցեղերի։

Սպիտակ ցեղը Հարաւային Աֆրիկայում։ Սպիտակ ցեղը աւստրալ եկած
է եւրոպայից—հոլլանդացիք, Անգլիացիք, Գերմանացիք, որոնք ծնած են
հարաւ-Աֆրիկայում, իսկ մասամբ միայն ծնունդով եւրոպացիք են։ Աֆ-
րիկա ծնածները կազմում են Աֆրիկանդէրներ. զուտ անգլիական տարրը
կազմում են ուիտլէնդերներ, հոլլանդական ծագում ունեցողները՝ Բուրեր
(Բուր, կամ Բոէր=boer=գիւղացիք)։ Բուրերը միայն 1800 թականնե-
րին Կապից (Աֆրիկայի հարաւային ծայրը) անգլիացիներից քշեցին աւե-
լի յէպլի հիւսիս, ուր նոքա կազմեցին Տրանսվալի և Օրանժեան հանրա-
պետութիւնները, որոնց անգլիացիք թողին կատարեալ ինքնաւարութիւն,
բայց ոչ միջազգային դաշինքներ կապելու իրաւունք։ Բուրերի երկիր-
ները անգլիական դարձնելու համար անգլիական մեծ զործիչ Ալսիլ Ռոյս
անգլիական տարրը՝ ուիտլէնդերներին ներս քշեց Բուրերի մէջ։ Բուրերը,
անկախ լինելու համար, ձգտում էին յէպլի ովկիանոսը. բայց Անգլիան
նոցա երկիրները ովկիանոսից հեռու պահելու համար՝ սփռածեց Նատալ
կալածքը՝ Դուրբան, Պիտերմարիցբուրգ, Լէյդիսմիտ քաղաքներով։ Ընդ-
հանրապէս կարելի է ասել որ աֆրիկանդէրները իրենց համակրութիւն-
ներով բուրերի կողմն են։

Մարդահամար։ Կապի երկրում 1891-ի մարդահամարով կալ 1.527.224
հոգի, որի մէջ սպիտակ ցեղի՝ 376.987 հոգի, (որոնցից 27.667-ը բուն
Անգլիացից, 6.646-ը Շոտլանդիացից, 4.184-ը Իռլանդիացից, 6.540-ը գեր-
մանացի. իսկ մնացած ամենամեծ մասը—աֆրիկանդէրներ, ալսինքնախ-
կին եւրոպացիների սերունդներ, որոնց մէջ հոլլանդական տարրը գերիշխող
է)։—Նատալում եւրոպական ցեղից կան 47.000 հոգի, կաֆրեր 456.000,
հնդկացիք 42.000. վերջիններս եկած են Հնդկաստանից, գլխաւորապէս
իբր առեւտրականների։